



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի Մ Ա Ր Զ Պ Ե Տ

«---» «-----» 2022թ.

N -----

**«ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԿ
INFOCOM.AM ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԻ
ԼՐԱԳՐՈՂ ՀԱՅԱՐՓԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ
(ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ՝ PRESS@INFOCOM.AM)**

Ի պատասխան 2022 թվականի մարտի 17-ի հարցման

Իրազեկման կարգով տեղեկացվում է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով:


Միաժամանակ տեղեկացվում է, որ «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով, որպես մարզպետի ընդհանուր լիազորություններ, Կառավարությունը մարզերում իր տարածքային քաղաքականությունն իրագործում է մարզպետների միջոցով: Իսկ նույն օրենքի 8-րդ հոդվածով հստակ սահմանված են մարզպետի կողմից մարզի տարածքում Կառավարության տարածքային քաղաքականության իրագործման բնագավառները:

Նշված իրավակարգավորումները հիմք ընդունելով՝ տեղեկացվում է, որ Ձեր կողմից ներկայացված հարցադրումը, մարզպետի լիազորություններից դուրս է:

Տեղեկացվում է նաև, որ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները հիմք ընդունելով՝ Ձեր հարցադրումը Դուք կարող եք ուղղել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:

3/23/2022

X 

VERIFIED OCSP 3/23/2022 16:18:14 GMT+4

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Ջարգացման ծրագրերի, գրոսաշրջության և վերլուծության բաժին,
Իրավաբանական բաժին
Անուն ազգանուն՝ Լիլիթ Մուշեղյան
Լիաննա Հարությունյան
Հեռ.՝ 0237-2-27-19